



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՐԻՄՍԻԱՍՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
Archbishop Moushegh Mardirossian, Prelate
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՕԾՄԱՆ 12-ՐԴ ՏԱՐԵՂԱՐՁԸ ՆՇՈՒԵՑԱՒ
ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ ԲՈԼՈՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՆ ՄԵՋ**

Մեծի Տանն Կիլիկիոյ Ս. Աթոռի Գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի ընտրութեան եւ օծման 12-րդ տարեդարձին առիթով, Կիրակի, 24 Յունիս 2007ին, Թեմիս բոլոր եկեղեցիներուն մէջ տեղի ունեցաւ Հայրապետական Մաղթանք:

Այս առիթով, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսեան հանդիսապետեց Մոնթեպելլոյի Ս. Խաչ Մայր Տաճարի Ս. Պատարագին եւ «Հայրապետական Մաղթանք»ի յատուկ արարողութիւն:

Սրբազանը իր քարոզին մէջ անդրադարձաւ Յիսուսի ներկայացուցած բարի ու քաջ Հովիւի կերպարին, շեշտելով Յիսուսի անձնագոհողութիւնը իր ոչխարներուն համար, «Ան՝ որ իր արիւնով կնքուած ուխտով Հովուապետ եղաւ ամբողջ հօտին» (Եբր 13.20): Նոյն այս Հովուապետն է, որ «երբ յայտնուի՝ անթառամ փառքի պսակը» (Ա. Պտ 5.4) պիտի շնորհէ իրեններուն: Ընդունիլ Յիսուսը որպէս մեր Հովուապետը՝ կը նշանակէ զինք լաւ ճանչնալ: Իսկ ճանչնալ կը նշանակէ՝ սիրել զինք ամբողջ հոգիով, որովհետեւ այդ եզակի սիրոյ ընդմէջէն է որ պիտի կարենանք լսել Յիսուսի ձայնը:

Ապա Սրբազանը անդրադարձաւ Մեծի Տանն Կիլիկիոյ Ս. Աթոռին ծառայութիւնը մեր ժողովուրդի կեանքէն ներս, յետ Եղեռնեան շրջանէն մինչեւ այսօր, յատկապէս շեշտելով Վեհափառ Հայրապետին արի ու քաջ հովուապետութիւնն ու առաջնորդութիւնը Հայ Եկեղեցւոյ ու մեր ժողովուրդի կեանքին մէջ: Ապա Սրբազանը աղօթք բարձրացնելով առ Աստուած, խնդրեց՝ որ արեւշատութիւն պարգեւէ Վեհափառ Հայրապետին ու բոլորիս ընծայէ իր հովուապետութիւնը վայելելու երկար տարիներ, աղօթասացին բառերով ակարտելով. «Օրհնէ՛, Հայր ամենակալ, մեր Հայրեպետին՝ Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի կեանքին օրերը, եւ զօրացուր զինք հոգիով եւ մարմնով, որպէսզի բոլորիս կողմէ փառաւորուած մնայ, քու անուանոյ պատիւին համար եւ իբրեւ պարծանք Սուրբ Աթոռոյս»:

12TH ANNIVERSARY OF THE ELECTION AND CONSECRATION OF H.H. ARAM I CELEBRATED IN PRELACY CHURCHES

On the 12th anniversary of the election and consecration of H.H. Aram I, Catholicos of the Great House of Cilicia, Pontifical prayer service took place in all Prelacy churches on Sunday, April 24th.

On this occasion, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, presided over Mass and Pontifical prayer and delivered the sermon at Holy Cross Cathedral in Montebello. During his sermon the Prelate referenced the service of the Catholicosate of Cilicia to the Armenian people from the time of the Genocide until the present time, specifically stressing the strong leadership and guidance of H.H. Aram I to the Armenian Church and people. The Prelate then beseeched the Lord to grant His Holiness good health and many more years of service so that we may benefit from his leadership for years to come.